ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ

Դ Ի Մ ՈՒ Մ

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

1. Դիմումը ներկայացնելու իրավական հիմքը.

Դիմումը ներկայացվում է հիմք ընդունելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը:

2. Դիմումի առարկան.

Սույն դիմումով վիճարկվում է 1999 թվականի ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված, 1999 թվականի մայիսի 8-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրված և 1999 թվականի մայիսի 14-ին ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածին համապատասխանությունն, այնքանով, որքանով այն չի ապահովում պետական ուսումնական հաստատություններում 4-րդ դասարանից բարձր դասարաններում ուսուցանող աշակերտների՝ միջնակարգ անվճար կրթություն ստանալու իրավունքի լիարժեք իրացումը:

3. Դիմումով վիճարկվող իրավական դրույթները.

«Կրթության մասին» ՀՀ օրենքի[1] 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«**Հոդված 6. Կրթական իրավունքի պետական երաշխիքները**

(...)

4. Պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով: (...)»:

4. ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները.

«**Հոդված 38. Կրթության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: (...) Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:»:

«Հոդված 75. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:»:

5. Գործնականում առաջացած խնդիրները.

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմումներով բարձրաձայնվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների գանձման խնդիրը:

Այսպես, Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական հանրակրթական դպրոցների *առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին*

[1] Այսուհետ՝ Օրենք

պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:

ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2009 թվականի օգոստոսի 21-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» № 752-Ն հրամանի[2]՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգը սահմանող հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 15 օր առաջ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից հաստատվում են՝

1) տվյալ ուսումնական տարում օգտագործվող հիմնական դասագրքերի ցանկը.
2) սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների տարեկան չափը:

Արդյունքում՝ 2017 թվականի հուլիսի 28-ին ընդունվել է «Հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի № 834-Ա/2 հրամանը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 834-Ա/2 հրամանի հավելվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 1-ից 4-րդ դասարանների բոլոր դասագրքերն անվճար են, իսկ 4-րդ դասարանից բարձր դասարանների կրթական ծրագրերով անհրաժեշտ դասագրքերի համար միջինում սահմանվում է 380-ից 550 ՀՀ դրամ ներդրումային գումար: Ստացվում է, որ յուրաքանչյուր ծնող, օրինակ՝ 5-րդ

[2] Այսուհետ՝ Հրաման

դասարանի մաթեմատիկա առարկայի դասագրքի օգտագործման համար պետք է վճարի 490 ՀՀ դրամ:

Վերոնշյալ իրավական ակտերի բովանդակային-համադրված վերլուծությունից բխում է, որ պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով, իսկ այլ դասարանների աշակերտների դասագրքերի համար սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց վճարվում են ներդրումային գումարներ: Ընդ որում, վերոնշյալ իրավական ակտերի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ այդ ներդրումային գումարների վճարումը դասագրքերի տրամադրման համար պարտադիր պայման է:

Դիմում ներկայացրած անձինք հայտնել են, որ նշված ներդրումային գումարների նախատեսման և գանձման արդյունքում սահմանափակվում է որպես անձի հիմնական իրավունք ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրված պետական ուսումնական հաստատություններում անվճար միջնակարգ կրթություն ստանալու իրավունքը:

Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ), միջին դպրոց (5-9-րդ դասարաններ), ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) հաջորդական աստիճաններով: Նշված հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է*: Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի՝ *միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է*: Այսինքն՝ թե՛ ՀՀ Սահմանադրությունը, թե՛ դրա հիման վրա ընդունված օրենքները նախատեսում են անվճար միջնակարգ կրթություն, այսինքն՝ 1-12-րդ դասարաններում կրթություն ստացող երեխաների համար

կրթությունն անվճար է: Միաժամանակ, դասագրքերն անվճար տրամադրվում են միայն 1-4-րդ դասարաններում ուսուցանող աշակերտներին:

Համեմատություն անցկացնելու նպատակով ուսումնասիրվել են ՀՀ կրթության և գիտության նախարարների՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին 2010-2017 թվականների համանուն հրամանները: Հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների յուրաքանչյուր ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի տարբեր տարիների հրամանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դասագրքերի համար նշված ներդրումային գումարների չափը տարեցտարի ոչ միայն չի պակասում, այլև՝ ավելանում է:

Ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերով հաստատված դասագրքերի ներդրումնային գումարների տարեցտարի աճման միտումը կարելի է ցույց տալ, օրինակ՝ ուսումնական հաստատությունների 5-րդ դասարանի դասագրքերի օրինակով: Այսպես, *մայրենիի դասագիրք*՝ 330 ՀՀ դրամ 2010 թվական, 470 ՀՀ դրամ 2014 թվական, 490 ՀՀ դրամ 2017 թվական, *մաթեմատիկայի դասագիրք*՝ 330 ՀՀ դրամ 2010 թվական, 470 ՀՀ դրամ 2014, 490 ՀՀ դրամ 2017 թվական, *ռուսաց լեզվի դասագիրք*՝ 450 ՀՀ դրամ 2010 թվական, 420 ՀՀ դրամ 2014 թվական, 420 ՀՀ դրամ 2017 թվական, *անգլերենի դասագիրք*՝ ՀՀ 400 դրամ 2010 թվական, 440 ՀՀ դրամ 2014, 490 ՀՀ դրամ 2017 թվական, *տեխնոլոգիայի դասագիրք*՝ 400 ՀՀ դրամ 2010 թվական, 280 ՀՀ դրամ 2014 թվական, 280 ՀՀ դրամ 2017 թվական, *հայրենագիտության դասագիրք*՝ 330 ՀՀ դրամ 2010 թվական, 380 ՀՀ դրամ 2014 թվական, 380 ՀՀ դրամ 2017 թվական, *բնագիտության դասագիրք*՝ 330 ՀՀ դրամ 2010 թվական, 380 ՀՀ դրամ 2014 թվական, 380 ՀՀ դրամ 2017 թվական, *երաժշտության դասագիրք*՝ 330 ՀՀ դրամ 2010 թվական, 470 ՀՀ դրամ 2014 թվական, 470 ՀՀ դրամ 2017 թվական, *Հայոց*

եկեղեցու պատմության դասագիրք՝ 250 ՀՀ դրամ 2010 թվական, 300 ՀՀ դրամ 2014 թվական, 300 ՀՀ դրամ 2017 թվական:[3]

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսումնական հաստատությունների դասագրքերի ներդրումային գումարների չափը ավելանում է ոչ միայն տևական ժամանակի ընթացքում (օրինակ՝ 2010 և 2017 թվականների ընթացքում), այլև՝ յուրաքանչյուր տարի: Այսպես, «Հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 739-Ա/2 և «Հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 834-Ա/2 հրամանների հավելվածներում հաստատված 2016-2017 և 2017-2018 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափերի համադրված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ 2016-2017 թվականի համեմատությամբ 2017-2018 թվականին հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված 10 առարկաների դասագրքերի ներդրումային գումարների չափն ավելացել է: Օրինակ՝ *ռուսաց լեզվի դասագիրք*՝ 2016 թվականին՝ 470 ՀՀ դրամ, 2017 թվականին՝ 490 ՀՀ դրամ, *անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի դասագրքեր*՝ 2016 թվականին՝ 360 ՀՀ դրամ, 2017 թվականին՝ 550 ՀՀ դրամ, *համաշխարհային պատմության դասագիրք*՝ 2016 թվականին՝ 410 ՀՀ դրամ, 2017 թվականին՝ 550 ՀՀ դրամ: Ներդրումային գումարների

[3] «2010-2011 ուսումնական տարվա հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 1322-Ա/2;
«Հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 2014-2015 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 804-Ա/2;
«Հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 2014-2015 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 834-Ա/2

չափերի իջեցումներ են նկատվել միայն 2 առարկաների դասագրքերի համար (ֆիզիկայի և կենսաբանության դասագրքեր):

Պետական ուսումնական հաստատություններում ընդհանուր կրթության ծրագրերով նախատեսված դասագրքերի համար ներդրումային գումարներ (ուստի և միջնակարագ կրթության համար «թաքնված վճարներ») սահմանելու արդյունքում փաստորեն հարցի տակ է դրվում կրթության անվճար լինելը, իսկ որոշ դեպքերում անձինք ուղղակիորեն կարող են զրկվել կրթության իրավունքի լիարժեք իրականացման հնարավորությունից (օրինակ՝ սոցիալապես անապահով լինելու և միաժամանակ մի քանի դպրոցական երեխա ունենալու դեպքում):

Ընդ որում, օրենքի մակարդակով այդ վճարների վերաբերյալ խոցելի խմբերի երեխաների դասագրքերի համար որևէ բացառություն նախատեսված չէ: Այսպես, նախքան ««Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2015 թվականի հունվարի 3-ի № ՀՕ-201-Ն օրենքի ընդունումը՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում էր, որ պետական հանրակրթական դպրոցների առաջին դասարանների աշակերտներին պետությունը, պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար ապահովում է դասագրքերով, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով: Սակայն խոցելի խմբերի երեխաներին կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով ապահովման երաշխիք սահմանող այս դրույթը օրենքի հետագա փոփոխությունների արդյունքում (2015 թվականի հունվարի 3-ի № ՀՕ-201-Ն օրենքով) վերացվել է:

Ավելին, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բոլոր

պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ աշակերտների թվի, ֆինանսավորման իրականացման բանաձևը: Այս բանաձևում ներառված է նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի համար փոխհատուցվող գումարի չափը (ՍԱդգ): ՀՀ կրթության և գիտության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում[4]: Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը քննարկվում և ձևավորվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում, որը հաստատվում է տնօրենի կողմից:

Սակայն խնդիրն այն է, որ պարզ չէ, թե ի՞նչ չափանիշների հաշվառմամբ, ի՞նչ սկզբունքով են ընտրվում ցուցակում ներգրավված երեխաները կամ նրանց ընտանիքը, արդյոք հիմք է ընդունվում ընտանիքի նպաստառու լինելու փաստը, թե՞ ցուցակը կազմվում է նաև այլ չափանիշների հիման վրա: Անհստակության հանգեցնող բոլոր այս հարցերը գործնականում մի շարք խնդիրներ են առաջացնում: Նախևառաջ ամոթի և իրենց երեխաներին հնարավոր խարանից զերծ պահելու պատճառով որոշ ծնողներ առհասարակ չեն բարձրաձայնում իրենց կողմից այդ վճարների տրամադրման բարդությունները, իսկ մի շարք դեպքերում էլ այս իրավիճակը բերում է խտրական վերաբերմունքի: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված ահազանգերով ծնողները նշել են, որ դասագրքերի ներդրումային գումարներն ուշացնելու արդյունքում վատթարացել է իրենց երեխայի նկատմամբ վերաբերմունքը

[4] ՀՀ կրթության և գիտության նախարարի «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին հայաստանի հանրապետության պետական ուսումնական հաստատությունների կողմից անվճար տրվող դասագրքերի դիմաց փոխհատուցման ենթակա գումարների մասին» 2011 թվականի հոկտեմբերի 12-ի №1137-Ա/Ք հրաման
file:///D:/data/Downloads/4877arm-Hraman1137.pdf

դպրոցի անձնակազմի կողմից: Այս մասին են վկայում նաև ոլորտի հասարակական կազմակերպությունների և անհատների հետ առանձնազրույցները: Արդյունքում ստացվում է այնպես, որ նույն սոցիալական պայմաններում ապրող երկու տարբեր ընտանիքների դեպքում գումարի գանձումն իրականացվում է տարբեր ձևերով: Այսինքն՝ մի դեպքում ընտանիքը կհամարվի աջակցության կարիք ունեցող և հետևաբար՝ կազատվի ներդրումնային գումարի վճարումից, իսկ այլ դեպքում՝ մեկ այլ ընտանիք, որը նույն սոցիալական վիճակում է, ստիպված կլինի վճարել ներդրումային գումարները:

Համանման խնդիրներ են բարձրաձայնվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ահազանգած անձանց կողմից, ովքեր ներկայացրել են սոցիալապես անապահով ընտանիքների բարդությունները կապված դասագրքերի համար ներդրումային գումարների գանձման հետ:

6. Օրենքի նշված դրույթները հակասահմանադրական են հետևյալ հիմնավորումներով.

Խնդիրն անհրաժեշտ է ուսումնասիրել անվճար կրթության իրավունքի իրացման տեսանկյունից: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Ավելին, ՀՀ Սահմանադրության՝ անձի հիմնարար իրավունքներն ամրագրող 2-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է: Միջնակարգ կրթության անվճար լինելու երաշխիքներ են ամրագրված եղել նաև 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 3-րդ մասով: Ավելին, ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների գիտագործական ժողովածուի համաձայն՝ այդ երաշխիքի մեկնաբանության համար կարևոր նշանակություն ունի «միջնակարգ կրթություն» հասկացության բովանդակության բացահայտումը[5]: Միջնակարգ կրթությունը միջնակարգ (լրիվ) ընդհանուր և հատուկ ընդհանուր կրթությունն է, որն իրականացվում

[5] http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf, էջ 466

է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցներում՝ տարրական, միջին դպրոց և ավագ դպրոց հաջորդական աստիճաններով: Այսպիսով, Սահմանադրությունը սահմանում է, որ միջնակարգ կրթությունը պետության կողմից հիմնադրված պետական ուսումնական հաստատություններում՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում անվճար է:

Այս սահմանադրական երաշխիքները հաշվի առնելով՝ օրենսդիրը համապատասխան հենակետային դրույթներ է նախատեսել նաև ոլորտը կարգավորող օրենքներում: Մասնավորապես՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետությունը ՀՀ քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի՝ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Անվճար կրթության իրավունքը երաշխավորվում է նաև ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերով: Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի»՝ երեխաների և երիտասարդների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը սահմանող 17-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պարտավորվել է, ի թիվս այլնի, նաև ապահովել երեխաների և երիտասարդների՝ տարրական և միջնակարգ դպրոցներում անվճար կրթությունը:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի» տարբեր հոդվածների առնչությամբ տրված մեկնաբանության նախադեպային իրավունքի ժողովածուի համաձայն՝ երեխաների և երիտասարդների՝ իրենց անձի, ֆիզիկական և մտավոր կարողությունների զարգացմանը նպաստող միջավայրում մեծանալու իրավունքի ապահովման տեսանկյունից պետությունը ուղղակիորեն կամ հասարակական ու մասնավոր կազմակերպությունների հետ

համագործակցության միջոցով ձեռնարկում է բոլոր պատշաճ միջոցներն ուղղված երեխաների և երիտասարդների անվճար միջնակարգ կրթության իրավունքի իրականացմանը: Ըստ նշված փաստաթղթի՝ կրթության տարրական և միջին աստիճանները պետք է լինեն անվճար, ինչը ներառում է կրթական հիմնական համակարգը (միջնակարգ կրթություն): Ավելին, ըստ կոմիտեի՝ «թաքնված վճարները», որոնք են՝ գրքերի կամ համազգեստների վճարները, պետք է լինեն ողջամիտ և դրանց ազդեցության նվազեցման համար խոցելի խմբերին աջակցություն պետք է ցուցաբերվի:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագիրը վավերացրած պետությունները ճանաչում են կրթության՝ յուրաքանչյուր մարդու իրավունքը: Նրանք համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ: Դաշնագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ դաշնագրին մասնակցող պետությունները գտնում են, որ այդ իրավունքի լրիվ իրականացման համար՝

- առաջնային (primary) կրթությունը պետք է լինի պարտադիր և անվճար բոլորի համար,
- միջին (secondary) կրթությունն իր զանազան ձևերով, ներառյալ պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունը, պետք է լինի բաց և մատչելի բոլորի համար՝ բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման և, մասնավորապես, *անվճար կրթություն աստիճանաբար մտցնելու ճանապարհով*:

Ավելին, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Թիվ 13 ընդհանուր մեկնաբանության 6-րդ կետի համաձայն՝ տնտեսական հասանելիությունը ենթադրում է, որ կրթությունը պետք է հասանելի լինի բոլորին: Խոսելով հասանելիության մասին՝ կոմիտեն առանձնացնում է տնտեսական հասանելիությունը, որն իրենից ենթադրում է, որ պետությունները պետք է ապահովեն

անվճար սկզբնական կրթություն և ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը միջին և բարձրագույն կրթությունն անվճար դարձնելու ուղղությամբ[6]:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Թիվ 11 ընդհանուր մեկնաբանության 1-ին կետի համաձայն՝ *պետության ֆինանսական դժվարությունները չեն կարող խոչընդոտ հանդիսանալ վերջինիս անվճար կրթության ապահովման պարտականության իրականացման համար*: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոնվենցիայի վավերացման ժամանակ, եթե պետությունը ի վիճակի չէ ապահովել պարտադիր անվճար միջնակարգ կրթություն, վերջինս կրում է անմիջական պարտականություն երկու տարվա ընթացքում մշակել և ընդունել գործողությունների մանրամասն ծրագիր ողջամիտ ժամանակում վերջինիս աստիճանական ներդրման համար: Ավելին, ըստ նույն ընդհանուր մեկնաբանության 8-րդ հոդվածի՝ նշված իրավունքն ուղղակիորեն ձևակերպված է այնպես, որպեսզի ապահովվի անվճար միջնակարգ կրթության իրականացումը երեխայի, ծնողների կամ խնամակալների համար: Ըստ կոմիտեի՝ կառավարության, տեղական մարմինների, դպրոցների կողմից սահմանված, ինչպես նաև այլ ուղղակի վճարները խոչընդոտներ են հանդիսանում կրթության իրավունքից օգտվելու, ինչպես նաև կարող են վտանգել դրա իրականացումը: Կոմիտեն նշում է նաև, որ անուղղակի վճարները ևս, կարող են դասվել այդ նույն վճարների շարքին:

Դաշնագրի նշյալ երկու ընդհանուր մեկնաբանությունների համադրված ուսումնասիրությունից ստացվում է, որ դաշնագրում, ինչպես նաև միջազգային մի շարք փաստաթղթերում ամրագրված կրթության իրավունքի իրականացման համար պարտադիր է դրա անվճար լինելը: Ավելին, պետության պարտականությունն է, դաշնագիրը վավերացնելուց անմիջապես հետո կարճ ժամանակահատվածում ձեռնարկել անվճար կրթության իրավունքի իրացման ապահովմանն ուղղված քայլեր՝

[6] ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Թիվ 13 ընդհանուր մեկնաբանության (CESCR General Comment No. 13: The Right to Education (Art. 13) http://www.right-to-education.org/sites/right-to-education.org/files/resource-attachments/CESCR_General_Comment_13_en.pdf

համաձայն կազմված գործողությունների ծրագրի, եթե վավերացման ժամանակ հնարավոր չէր այն ապահովել:

Սակայն ուսումնական հաստատությունների դասագրքերի համար նախատեսված ներդրումային գումարների հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետության քաղաքականությունը նշյալ խնդրում չի հետևում մեկնաբանությամբ սահմանված անվճար ուսումնառությանն ուղղված քայլերի ձեռնարկմանը և վերջնականապես ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային մի շարք փաստաթղթերով ամրագրված ամբողջական անվճար միջնակարգ կրթության իրավունքի իրականացման ապահովմանը, ինչը վկայում են անուղղակի վճարների գանձումը, տարեցտարի ավելացող դասագրքերի ներդրումային գումարների աճը: Նշվածը հիմնավորվում է նախորդ բաժնում նշված ներդրումային գումարների նախատեսմամբ և դրանց աճման օրինաչափությամբ: Այնինչ միջազգային չափանիշների համապատասխան վերջիններս պետք է աստիճանաբար նվազեցվեն և որպես վերջնական նպատակ կրթության իրավունքի իրականացման խոչընդոտներ հանդիսացող անուղղակի վճարները պետք է վերացվեն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունների մեծամասնությունը կրում են անվճար միջնակարգ կրթության իրավունքի ապահովման պարտականություն, ինչն ամրագրված է սահմանադրությամբ (Չեխիա, Դանիա, Իռլանդիա և այլն): Ըստ այդմ, շատ երկրներ ամբողջ միջնակարգ ուսումնական շրջանի համար ապահովում են հենց դպրոցական նյութերի՝ դասագրքերի անվճար տրամադրումն աշակերտերին: Օրինակ՝ Լիտվայի «Կրթության մասին» օրենքի 70-րդ հոդվածի համաձայն՝ քառաստիճան կրթական համակարգն անվճար է, որի 3 աստիճաններում կրթական ծրագրերի նյութերն անվճար են: Ավելին, «Աշակետների սոցիալական աջակցության մասին» օրենքով առանձին կարգավորվում են աշակերտներին տրամադրվող այլ օգնությունների շրջանակը և տրամադրման կարգը: Շվեդիայում 7-15 տարեկան անձանց համար կրթությունը պարտադիր է, որի

իրականացման համար կրթական նյութերն անվճար են: Լեհաստանում ևս 1-8-րդ դասարանի աշակերտների համար կրթական ծրագրերի նյութերն անվճար են:

Կրթության իրավունքին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այսպես, Պոնոմարյովն ընդդեմ Բուլղարիայի գործով վճռում Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ պետությունները կարող են ունենալ լեգիտիմ պատճառներ միջոցների կարիք ունեցող հանրային ծառայությունների (այդ թվում կրթության ոլորտում) օգտագործումը սահմանափակելու համար: Դատարանի՝ նշյալ գործի շրջանակներում հայտնած դիրքորոշման համաձայն՝ պետությունների հայեցողության սահմանները կրթության աստիճանի բարձրացմանը զուգընթաց մեծանում է: Կրթության միջին աստիճանը անձի զարգացման և սոցիալական ու մասնագիտական ներգրավվածության համար կարևոր նշանակություն ունի: Վերջինիս ուղղված ցանկացած սահմանափակում հատկապես չպետք է ստեղծի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը խախտող խտրական համակարգ[7]:

Ստացվում է, որ ՀՀ-ն ճանաչում և երաշխավորում է անվճար միջնակարգ կրթության իրավունքը: Միաժամանակ, այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ և դրա բաղկացուցիչ մասը կազմող դասագրքերի համար նախատեսվել է վճար, որը գանձվում է իրավունքի սուբյեկտից: Ավելին, իրավակարգավորումների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ դասագրքերի տրամադրման համար պարտադիր պայման է այդ գումարների վճարումը: Ուստի, նախատեսելով անվճար միջնակարգ կրթություն՝ պետությունը նախատեսել է «թաքնված վճար», որը կարող է սահմանափակել անձի՝ անվճար միջնակարգ կրթություն ստանալու իրավունքը: Ընդ որում, նախատեսված չէ որևէ տարանջատում կապված, օրինակ, խոցելի խմբերի երեխաների դասագրքերի վերաբերյալ:

---

[7] Տե՛ս Պոնոմարյովն ընդդեմ Բուլղարիայի (Ponomaryovi v. Bulgaria) գործով վճիռը, 28-ը նոյեմբեր 2011 թվական, գանգատ թիվ 5335/05, կետ 54

Այսպես, ՀՀ Սահմանադրությամբ և այլ ներպետական իրավական ակտերով սահմանվել է անվճար միջնակարգ կրթության իրավունքը, սակայն իրավակիրառ պրակտիկայում նշված դրույթներին տրված մեկնաբանությունը, մասնավորապես՝ Հրամանի սահմանումը և դրա արդյունքում հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների դասագրքերի համար ամենամյա ներդրումային գումարների չափը հաստատելու մասին համապատասխան հրամանների սահմանումը խնդրահարույց է կրթության իրավունքի, հատկապես անվճար միջնակարգ կրթութան իրավունքի իրականացման համար:

Պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է, որ բավարար չէ ուղղակի ամրագրել հիմնական իրավունքները, քանի որ դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան կառուցակարգեր և հստակ ընթացակարգեր:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ ՍԴՈ-984 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը որոշելիս կարևոր նշանակություն ունի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, քանի որ իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլև նրանով, թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում:

Ուստի, կարևոր է ոչ միայն անվճար միջնակարգ կրթության իրավունքի ամրագրումը, այլ դրա լիարժեք իրականացման գործուն կառուցակարգերի առկայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասով, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. Սույն դիմումն ընդունել վարույթ,

2. Որորշել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածին համապատասխանության հարցը այնքանով, որքանով այն չի ապահովում պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ անվճար կրթություն ստանալու իրավունքի լիարժեք իրացումը: Օրենսդրական բացի և իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված մեկնաբանության, գործնականում այդ դրույթների ընկալման և կիրառման արդյունքում առաջանում են խնդիրներ, ինչը հանգեցնում է կրթության սահմանադրական իրավունքի սահմանափակման:

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ